Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.Անունը, ազգանունը.

Արսեն Թորոսյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ առողջապահության նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև), 2019 թվական, հունիսի 25-27-ը

4. Հրավիրող կողմը.

Պատվաստումների և Պատվաստանյութերի Միջազգային Դաշինք (GAVI) կազմակերպություն

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Պատվաստումների և Պատվաստանյութերի Միջազգային Դաշինք միջազգային հեղինակավոր կազմակերպության (GAVI) խորհրդի հերթական նիստին և խորհրդի անդամների փակ հանդիպմանը:

Հիմնական նպատակն ուղղված էր ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանին GAVI խորհրդի անդամ ընտրվելուն, ինչպես նաև Պատվաստումների և Պատվաստանյութերի Միջազգային Դաշինք միջազգային հեղինակավոր կազմակերպության գործունեությանն առնչվող իմունոկանխարգելման ծրագրերի հետագա իրականացման կարևորագույն խնդիրների քննարկմանը:

6. Քննարկված թեմաները.

Դոնոր երկրների առողջապահության նախարարությունների մասնակցությունը ընդգրկող այս հանդիպումը լավ հարթակ էր տարածաշրջանում առկա համագործակցության ընդլայնման, ինչպես նաև ընդհանուր քաղաքական ռազմավարության մշակման տեսանկյունից:

Այցի շրջանակներում աշխատանքային հանդիպումներ եղան մի շարք ԳԱՎԻ դաշինքի անդամ-պետությունների առողջապահության ղեկավարների հետ: Նրանց հետ քննարկվեցին երկրների միջև առողջապահության բնագավառում համագործակցության ընթացքը, հետագա զարգացման հեռանկարներն ու հնարավորությունները: Քննարկվեցին ՀՀ առողջապահության նախարարության և ԳԱՎԻ դաշինքի միջև համագործակցության ուղիները, ԳԱՎԻ դաշինքի կողմից հնարավոր տեխնիկական օժանդակության հարցը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Պատվաստումների և ԳԱՎԻ-ի զարգացման հեռանկարների շուրջ իր պատկերացումների վերաբերյալ զեկույցով հանդես եկավ ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Ներկայացվեցին նշված ոլորտում Հայաստանի կողմից իրականացված աշխատանքները, գրանցած հաջողություններն ու հետագա քայլերը: Շեշտադրվեց փոխօգնության միջոցով համագործակցության իրականացման կարևորությունը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանն ընտրվեց ԳԱՎԻ դաշինքի խորհրդի անդամ, ով կներկայացնի զարգացող երկրների տարածաշրջանային խնդիրները մինչև 2021թ դեկտեմբերի 31-ը:

GAVI-ի կողմից մշակվելու է նոր ռազմավարություն, զուգահեռ ներդրվելու են մեխանիզմներ, որոնք թույլ կտան ավելի արդյունավետ արձագանքելու ի հայտ եկող դեպքերին:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկվեց հնարավորություն ստեղծել, որպեսզի Հայաստանում նույնպես ներդրվեն GAVI-ի կողմից մշակվող նոր մեխանիզմները, ինչպես նաև շարունակվի GAVI-ի աջակցությունը Հայաստանին:

GAVI-ն կքննարկի բարձրացված հարցերը և կայացված որոշման վերաբերյալ կտեղեկացնի հերթական հանդիպման ընթացքում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

X _____

2019թ. հունիսի 28